ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 դեկտեմբերի 2024 թվականի N 1990 - Լ

ԱՆՀՈՒՍԱԼԻ ՎԱՐԿԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83-րդ հոդվածը և 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանման միջոցառումը՝ համաձայն N 1 հավելվածի (այսուհետ՝ միջոցառում):

2. Հաստատել անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանման միջոցառման իրականացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի (այսուհետ՝ կարգ):

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

1) միջոցառման իրականացումը ֆինանսավորելու նպատակով մինչև 2025 թվականի փետրվարի 10-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել 2025 թվականի պետական բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություն՝ ավելացնելով եկամուտները և ծախսերը.

2) ապահովել միջոցառման իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ համակարգ) մշակումն ու ներդրումը «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի միջոցով՝ մինչև 2025 թվականի հունվարի 25-ը.

3) ապահովել համակարգի շահագործումը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության կողմից.

4) մինչև 2025 թվականի հունվարի 25-ը ապահովել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության կողմից սույն միջոցառման շրջանակում ֆինանսական միջոցների փոխանցման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր առևտրային բանկերի հետ համապատասխան պայմանագրերի կնքումը.

5) Հայաստանի բանկերի միության հետ համագործակցելով՝ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկերի և վարկային կազմակերպությունների և «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել համաձայնագիր, որով կսահմանվեն միջոցառումից բխող առանձնահատկությունները, այդ թվում՝ միջոցառման շահառուների անհուսալի վարկերի գծով առաջացած տույժերի, տուգանքների և ժամկետանց տոկոսագումարների հնարավոր ներման դեպքերը, չափը, ժամկետներն ու կարգը:

4. Գլխավոր հարկադիր կատարողին՝ ապահովել սույն միջոցառման շրջանակում շահառու ճանաչված անձանց նկատմամբ բանկի կամ վարկային կազմակերպության կողմից ներկայացված հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման ընթացքում շահառուի (պարտապանի) աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) պահվող (բռնագանձվող) չափը 20% սահմանելը, եթե օրենքով կամ կատարման ենթակա ակտով բռնագանձման առավել նվազ չափ սահմանված չէ:

5. Միջոցառման շրջանակում շահառու դառնալու համար դիմումների ընդունման ժամկետ սահմանել 2026 թվականի հունվարի 31-ը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրվանից, իսկ որոշման 1-ին և 2-րդ կետերը՝ 2025 թվականի փետրվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

13.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ